«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Նախշուն Ամիրջանյան

Ուսումնական հաստատություն՝

Շնողի Հ. Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն **3**

Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդի վիճակի ուսումնասիրությունը կայուն զարգացման համատեքստում 4

Ազգաբնակչության էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը որպես բնապահպանական միջավայրի պաշտպանության հիմք 9

Էկոլոգիական կրթության դերը դպրոցներում 13

Եզրակացություններ և առաջարկություններ **16**

Օգտագործված գրականության ցանկ **18**

Ներածություն

Բնապահպանական կրթությունը անընդմեջ գործընթաց է՝ նպատակաուղղված անձի էկոլոգիական գիտելիքների ուսուցմանը, էկոլոգիական դաստիարակությանը, էկոլոգիական մշակույթի արմատավորմանը, բնապահպանության, բնօգտագործման և էկոլոգիական անվտանգության բնագավառում անձի ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը, ունակությունների դրսևորմանը և վարքագծի ձևավորմանը: Անհրաժեշտ է մանկական տարիքից նպատակաուղղված ձևով դաստիարակել պատասխանատվություն մեզ շրջապատող միջավայրի նկատմամբ: Իսկ դրա իրականացումը հնարավոր է հիմնականում էկոլոգիական կրթության շնորհիվ:

Շրջակա միջավայրի հանդեպ սպառողական վերաբերմունքը, գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների՝ կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության կորստի, հողերի դեգրադացման և անապատացման, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի աղտոտման, ընդերքի անխնա շահագործման վերաբերյալ մակերեսային ընկալումը հետևանք են էկոլոգիական գիտելիքների և մշակույթի ցածր մակարդակի կամ բացակայության: Պետք է գիտակցել, որ մարդն իր շարունակական գոյության համար կախված է այն միջավայրի բարվոք վիճակից, որտեղ ինքը ծագել ու զարգացել է, որ այսօր այդ միջավայրի կենսաքիմիական փոփոխությունները կարող են մահացու լինել նրա համար: Գլոբալ մասշտաբներով էկոլոգիական հիմնախնդիրների լուծումն անհնարին է առանց ժամանակակից տիրող բնապահպանության գիտակցության փոփոխության: Հենց դրանով էլ պայմանավորված է **թեմայի արդիականությունը**:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել էկոլոգիական կրթության և իրազեկման դերն ու նշանակությունը կրթական համակարգում, բացահայտել հասարակության բնապահպանական իրազեկության բարձրացման, էկոլոգիական կրթության, դաստիարակության արդի մոտեցումները և դրանց կիրառումը ՀՀ-ում:

Էկոլոգիական կրթության և դաստիարակության արդի վիճակի ուսումնասիրությունը կայուն զարգացման համատեքստում

Մարդկային գործունեության գլոբալ հետևանքները լի են էկոլոգիական ճգնաժամերով և աղետներով: Ամբողջությամբ վերցրած՝ մարդը ներկայումս իր կարիքների համար օգտագործում է էկոհամակարգերի կենսազանգվածի 10%-ը և դրան զուգահեռ ոչնչացնում է ևս 30%-ը, որը հանգեցնում է էկոլոգիական ճգնաժամերի: Բնական տարերային երևույթների ազդեցության տակ (կլիմայի փոփոխություն, ջրհեղեղներ, երաշտ, երկրաշարժեր, ցունամի) կենսոլորտում էկոլոգիական հավասարակշռության խախտման հետևանքով տեղի է ունենում էկոլոգիական համակարգերի ոչնչացում:

21-րդ դարի էկոլոգիան ուսմունք է մարդկության գոյատևման և կայուն զարգացման ուղիների մասին: Կայուն զարգացումը - դա զարգացում է, որը ներկա և հաջորդ սերունդների ներկայացուցիչներին երաշխավորում է պատշաճ, առավելագույնս հնարավոր հավասար մեկնարկային պայմաններ՝ իրենց ընդունակությունները դրսևորելու և կենսական կարիքները բավարարելու համար: Կայուն զարգացումը հիմնվում է այնպիսի տնտեսության վրա, որը մարդու իրավունքները պաշտպանող ժողովրդավարական հասարակության մեջ զուգորդվում է էկոլոգիական անվտանգության և սոցիալական արդարության սկզբունքների հետ:[1]

Պետք է գիտակցել, որ մարդն իր շարունակական գոյության համար կախված է այն միջավայրի բարվոք վիճակից, որտեղ ինքը ծագել ու զարգացել է, որ այսօր այդ միջավայրի կենսաքիմիական փոփոխությունները կարող են մահացու լինել նրա համար: Գլոբալ մասշտաբներով էկոլոգիական հիմնախնդիրների լուծումն անհնարին է առանց ժամանակակից տիրող էկոլոգիական գիտակցության փոփոխության: «Էկոլոգիական գիտակցություն» տերմինն ավանդաբար նշանակում է «մարդ-բնություն» համակարգում, բնության ներսում փոխադարձ կապերի բարելավում, բնության նկատմամբ գոյություն ունեցող վերաբերմունքի բարելավում, ինչպես նաև տեխնոլոգիայի և ռազմավարության գիտակցական մոտեցում, վերը նշված բոլոր պատկերացումների ամբողջություն: «Էկոլոգիական գիտակցության» ձևավորումը

[1] Կ. Դանիելյան, Լ.Սարգսյան, Տ.Սարգսյան, «ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊՐԱԿՏԻԿԱՆ»,Երևան 2013

հիմնականում իրականացվում է աճող սերնդի կրթադաստիարակչական աշխատանքում, ըստ կրթական համակարգի տարբեր օղակների: Էկոլոգիական գիտելիքների ձևավորման չափանիշներն են կենդանական, բուսական և անկենդան աշխարհի մասին տեղեկությունները:

«Էկոլոգիական կրթություն» տերմինը մանկավարժական գիտության մեջ հայտնվել է համեմատաբար վերջերս, բայց մարդու և շրջակա միջավայրի միջև փոխազդեցության խնդիրը, բնությունը տարբեր տեսակետներից դիտարկվել է մարդկության պատմության ընթացքում: Էկոլոգիական կրթության և դաստիարակոիթյան նպատակն է աճող սերնդին ծանոթացնել բնության, շրջակա միջավայրի առանձնահատկություններին, պարզաբանել բնության կարևորագույն օրենքները և այն ուղիները, որոնց միջոցով կարելի է պահպանել և վերարտադրել բնությունը:

Էկոլոգիական կրթությունը անընդմեջ գործընթաց է՝ նպատակաուղղված անձի էկոլոգիական գիտելիքների ուսուցմանը, էկոլոգիական դաստիարակությանը, էկոլոգիական մշակույթի արմատավորմանը, բնապահպանության, բնօգտագործման և էկոլոգիական անվտանգության բնագավառում անձի ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը, ունակությունների դրսևորմանը և վարքագծի ձևավորմանը: Անհրաժեշտ է մանկական տարիքից նպատակաուղղված ձևով դաստիարակել պատասխանատվություն մեզ շրջապատող միջավայրի նկատմամբ: Իսկ դրա իրականացումը հնարավոր է հիմնականում էկոլոգիական կրթության շնորհիվ:

Էկոլոգիական կրթություն տերմինի վերաբերյալ գրականության մեջ շատ մեկնաբանություններ կան: Այս տերմինը առաջացել է 1965 թվականին, երբ Կիելի համալսարանում տեղի ունեցավ մանկավարժական համաժողով, որի ընթացքում քննարկվեցին դպրոցականների համար բնապահպանական կրթության ներդրման հարցերը:

Շրջակա միջավայրի հանդեպ սպառողական վերաբերմունքը, գլոբալ էկոլոգիական հիմնախնդիրների՝ կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության կորստի, հողերի դեգրադացման և անապատացման, ջրային ռեսուրսների, մթնոլորտային օդի աղտոտման, ընդերքի անխնա շահագործման վերաբերյալ

մակերեսային ընկալումը հետևանք են էկոլոգիական գիտելիքների և մշակույթի ցածր մակարդակի կամ բացակայության:

Մինչ անցյալ դարի կեսերը գերիշխող "Դարչնագույն էկոնոմիկայի" արդյունքում ծառացել է այն իրավիճակը, որով բնորոշվում է թե՛ բնական, թե՛ շրջակա մարդածին միջավայրի ներկա անմխիթար վիճակը: Դա ստիպեց հայեցակարգային նոր մոտեցումներ զարգացնել նոր քաղաքակրթական փնտրտուքներում: 1970-80 թվականներից սկսեց առաջանալ անհանգստություն ինչպես բնության, այնպես էլ շրջակա միջավայրի վատթարացող վիճակների վերաբերյալ: Այդ անհանգստությունը աստիճանաբար հանգեցրեց «Կայուն զարգացման» գաղափարախոսության հաստատմանը հասարակության ու պետական կառավարման շրջանակներում ու վերաճեց համաշխարհային մակարդակի: Այն դարձավ Միավորված ազգերի կազմակերպության օրակարգային խնդիրը:

Կայուն զարգացման գաղափարախոսությունն ու սկզբունքները ներդրվեցին միջպետական քննարկումների ու բանակցությունների արդյունքում: Դա փորձ էր՝ ակնհայտորեն առաջացած գլոբալ էկոլոգիական խնդիրների լուծումը «տեղավորել» ազատական շուկայական մրցակցային տնտեսվարության համակարգում:

Կայուն զարգացման գաղափարախոսությունն իր սկզբունքներով հենվում է բնապահպանական, տնտեսական ու սոցիալական միասնականության ու հավասարազորության վրա: Այն ըստ էության «փոխզիջումային» է ու, ինչպես ցույց տվեց համաշխարհային տնտեսության զարգացման ընթացքը, այն չապահովեց ոչ հռչակած սոցիալական արդարության զարգացումն ու ամրապնդումը, ոչ էլ բնական էկոհամակարգերի պահպանվածությունն ու գործումը: Փոխարենը, էլ ավելի խորացավ սոցիալական բևեռացումը և ընդլայնվեց բնական էկոհամակարգերի վերացումը: Գործը հասավ կլիմայական համակարգի կայունության խախտմանն ու Երկրի պաշտպանիչ օզոնային շերտի տկարացմանը:

Աշխարհի տնտեսագիտական միտքը առաջ քաշեց «կանաչ էկոնոմիկայի» գաղափարախոսությունը:

«Կանաչ տնտեսագետների» կարծիքով Կայուն զարգացման գաղափարախոսությունը, որը հենվում է բնապահպանական, տնտեսական ու սոցիալական բաղադրիչների հավասարակշռության ու հավասարազորության վրա,

ձախողվել է, չունի հեռանկարներ և պետք է մերժվի, տեղը զիջելով նոր՝ “Կանաչ էկոնոմիկային”, որի հիմքում ընկած է բնապահպանությունը որպես առանցքային, անժխտելի եզրային պայման, իսկ տնտեսությունն ու սոցիալական ոլորտները պետք է դիտարկվեն որպես ածանցյալ կամ “կախյալ” բաղադրիչներ և հարմարվեն բնական միջավայրին ու այդ միջավայրի պահպանության պահանջներին:[2]

Փորձ կատարվեց այդ գաղափարը հարմարեցնել ու ծառայեցնել կայուն զարգացման գաղափարախոսությունը վերակենդանացնելու համար,

Հետևաբար նոր էկոլոգիական մտածելակերպի ձևավորումը, հիմնված բնության և հասարակության համատեղ զարգացման սկզբունքների վրա, անհնար է առանց համընդհանուր էկոլոգիական կրթության և դաստիարակության: Էկոլոգիական կրթության մեջ կիրառվում է 4 օրենք, որոնք ցանկալի է, որ մտնեն էկոլոգիական դաստիարակության մեջ: Դրանք են՝

1. *Կյանքում ամեն ինչ փոխկապակցված է:* Այս օրենքը կոչված է նախազգուշացնել մարդուն չմտածված գործողություններից էկոլոգիական համակարգերի տարբեր հատվածների վրա, որոնք կհանգեցնեն չնախատեսված, չծրագրավորված հետևանքների:
2. *Նյութերի շրջապտույտը բնության մեջ անխուսափելի է*: Մարդու տնտեսական գործունեության հետևանքով առաջացած թափոնները կա՛մ պետք է պակասեցնել, կա՛մ միջոց գտնել այդ թափոնները երկրորդաբար օգտագործելու համար, այսինքն նորից մտցել արտադրության մեջ:
3. *Բնությունը «գիտի» առավել ճիշտ:* Այս օրենքը կոչված է մարդուն իր գործունեությունը կատարել հավասարակշռված: Պետք է հիշել՝ մարդը բնության մասնիկ է, այլ ոչ՝ նվաճող: Այսինքն բնության հետ պետք է համագործակցել և չշահագործել այն:
4. *Ոչինչ չի տրվում անվերադարձ*, այն ամենը, ինչ վերցնում ենք բնությունից, վաղ թե ուշ վերադարձնելու ենք, փոխհատուցելու ենք:

Գլոբալ իմաստով էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը համամոլորակային մարդ-քաղաքացու դաստիարակությունն է: Էկոլոգիական

[2] Աղբյուրը՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, https://www.unep.org/about-un-environment/evaluation-office/our-evaluation-approach/theory-change

կրթության հիմնական նպատակը հետևյալն է՝ մարդկանց մեջ ձևավորել գիտելիքների, հայացքների և համոզմունքների մի ամբողջություն, որն ուղղված է շրջակա միջավայրի նկատմամբ մշտական խնամքի անհրաժեշտության գիտակցության: Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը մեր հասարակության մեջ գտնվում է շատ ցածր մակարդակի վրա: Դրա պատճառներից մեկը կրթական համակարգի անկատարությունն է: Ինֆորմացիոն դաշտի խիստ հագեցվածությունը նոր սերնդի մտածելակերպի, բարոյահոգեբանական, վերլուծական մտքի, խորը փոփոխության է հանգեցրել, և ժամանակն է կրթական և դաստիարակչական մոտեցումները թարմացնելու և համալրելու նոր մեթոդաբանությամբ: Այսօրվա կյանքին համաքայլ գնալու համար անհրաժեշտ է արմատական փոփոխություններ մտցնել հանրակրթական դպրոցի ծրագրերի մեջ՝ ավելի մեծ տեղ հատկացնելով էկոլոգիական կրթության և դաստիարակության ուսումնական նոր մեթոդաբանության ներդրմանը՝ հենվելով էկոցենտրիզմի մարդու և կենսոլորտի էվոլյուցիայի անհրաժեշտության հասկացության վրա:

Նոր քաղաքական ընկալմամբ հասարակության էկոլոգիական հոգեկերտվածքի ձևավորումը, հասարակության գիտակցության կայուն զարգացման գաղափարախոսության ամրապնդումը ուղղված են ժամանակակից քաղաքակրթության էկոլոգացմանը: Այս ուղղությամբ քաղաքական գործողությունների գլոբալ բնույթն ու արդիականությունը քննարկվել են Յոհանեսբուրգում կայացած «Կայուն զարգացման հազարամյակ»-ի գագաթնաժողովում: Այս ռազմավարությունը մի նոր աստիճան է էկոլոգիական կրթության որակի բարձրացման, ուղղությունների ընդլայնման, կառուցվածքային օպտիմալացման և նրա գործնական իրականացման համար:

Ներկայումս էկոլոգիական կրթությունը, ներդաշնակ լինելով հանուն կայուն զարգացման կրթությանը, հաջողությամբ կարող է նպաստել դրան՝ մեծացնելով կայուն զարգացմանն ուղված քաղաքական գործողությունների արդյունավետությունը: Ներկայումս էկոլոգիական կրթությունն արդեն ստեղծել է հանուն կայուն զարգացման ռազմավարական գործողությունների իրականացման քաղաքական կրթական դաշտ, որտեղ իրականացվող ցանկացած գլոբալ նպատակ պետք է համապատասխանի Յոհանեսբուրգի «Կայուն զարգացման

պարտավորություն»-ը ընդունած ցանկացած մասնակից երկրի հետաքրքրություններին՝ հաշվի առնելով ազգային, տեղական և տարածաշրջանային տարբեր պայմանները: [3]

Ազգաբնակչության էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը որպես բնապահպանական միջավայրի պաշտպանության հիմք

Մարդը, մաս կազմելով բնական էկոհամակարգին, օգտվում է նրա ռեսուրսներից՝ օդից ջրից հողից, կենդանական ու բուսական աշխարհից ու իր կյանքի ու գործունեության ընթացքում ներգործում է այդ էկոհամակարգի վրա իր թափոններով, մթնոլորտ արտանետումներով ու կեղտաջրերի արտահոսքերով: Բնականաբար, այդ ընթացքում նա ընկալում է բնությունը որպես իրեն շրջապատող միջավայր, որից նա օգտվում է ու որի վրա ներգործում: Եթե այդ երկուսը՝ օգտվելն ու ներգործելը չեն գերազանցում որոշակի սահմանը, բնական էկոհամակարգն իր ներքին բնական կարողությունների շնորհիվ կարողանում է վերականգնել իր բնական հավասարակշռությունը և նյութերի այդ շրջապտույտը շարունակվում է: Այն դեպքում, երբ այդ ներգործությունը գերազանցում է բնական էկոհամակարգի ինքնավերականգման կարողության սահմանը, տեղի է ունենում էկոհամակարգի վերաձևավորում: Բնական լանդշաֆտները վեր են ածվում գյուղատնտեսական հանդակների, բնակավայրերի, ճանապարհների, ջրամբարների, արդյունաբերական տարածքների և այլն: Այսինքն, ձևավորվում է մարդուն շրջապատող նոր, մարդածին շրջակա միջավայր: Այդպիսի միջավայրն իրենից ներկայացնում է բնական միջավայրից առանձնացած, կամ օտարված, ոչ բնական միջավայր: Հասկանալի է, որ այդպիսի միջավայրն իր բաղադրիչներով չի կարող չունենալ բացասական ազդեցություն բնական էկոհամակարգի բնականոն ընթացքի վրա: Հայաստանի Հանրապետությունում բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու՝ մարդու սահմանադրական իրավունքի և կարևորագույն պետական խնդրի՝ էկոլոգիական

[3] Ս.Գևորգյան, Ռ. Պետրոսյան,Մ.Ղազարյան, Ա.Գևորգյան, «ՀՀ էկոլոգիական կրթության հիմնադրույթները», Էջմիածին 2006

ապահովման նպատակով շրջակա բնական միջավայրի պահպանության գործում յուրաքանչյուրի սահմանադրական պարտականությունների իրականացումը պահանջում է քաղաքացիների էկոլոգիական բարձր կուլտուրա, որը ձեռք է բերվում էկոլոգիական անընդմեջ կրթության ընթացքում:

Պետական քաղաքականությունը ազգաբնակչության էկոլոգիական անընդմեջ կրթության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմինների գործունեությունն է՝ նպատակաուղղված ազգաբնակչության էկոլոգիական անընդմեջ կրթության իրականացման պայմանների ստեղծմանը, պետական մարմինների, շահագրգիռ հասարակական կազմակերպությունների և ֆիզիկական անձանց գործունեությանը, անձի և հասարակության էկոլոգիական կուլտուրայի ձևավորմանը:

էկոլոգիական կրթությունը անընդմեջ գործընթաց է՝ նպատակաուղղված անձին և ազգաբնակչությանը էկոլոգիական գիտելիքների ուսուցմանը, էկոլոգիական դաստիարակությանը, էկոլոգիական կուլտուրայի արմատավորմանը, բնապահպանության և բնօգտագործման բնագավառում նրանց ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը, ունակությունների դրսևորմանը և վարքագծի ձևավորմանը:

էկոլոգիական դաստիարակությունը էկոլոգիական կուլտուրայի հիմքն ու անբաժանելի մասն է, շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված անընդմեջ, համակարգված գործընթաց, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ, ձևավորել հմտություններ և բացահայտել ունակություններ, դրսևորել բարոյական չափանիշներ և վարքագիծ՝ բնության հետ փոխներգործության ընթացքում:

էկոլոգիական գիտելիքը հասարակական իմացության այն ոլորտն է, որը նպատակաուղղված է շրջահայաց բնօգտագործմանն ու մարդու առողջության համար անվտանգ շրջակա բնական միջավայրի ապահովմանը:

էկոլոգիական գիտելիքների նվազագույնը հասարակության ամեն մի անձին անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալը, որը ծառայում է անվնաս ու սակավաթափոն արտադրության, բնական պաշարների և էներգիայի խնայողության, տնտեսական և այլ գործունեության, ինչպես նաև շրջակա բնական միջավայրի

վերականգնման և դրա նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորման նպատակին:

էկոլոգիական կուլտուրան մարդու և բնության ներդաշնակ փոխներգործության վերաբերյալ հայրենական և համաշխարհային փորձն է, որը նպաստում է առողջ ապրելակերպին, սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, երկրի և յուրաքանչյուր անձի էկոլոգիական անվտանգությանը:

Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին 2001 թվականին ընդունվել է «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքը[4], որի նպատակն է՝

1. ապահովել մարդու և հասարակության անընդմեջ, համալիր, միասնական էկոլոգիական գիտելիքների մատուցումը,
2. նպաստել էկոլոգիական դաստիարակության և կուլտուրայի ձևավորմանը, մարդու, հասարակության ու շրջակա բնական միջավայրի փոխներգործությունների ներդաշնակմանը, համակողմանիորեն զարգացած անձի ձևավորմանը:

Օրենքի խնդիրներն են՝

1. էկոլոգիական գիտելիքների հաղորդման իրավունքի ապահովումը և պաշտպանումը,
2. ազգաբնակչության էկոլոգիական ուսուցման, դաստիարակման և էկոլոգիական կուլտուրայի ձևավորման ու զարգացման իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպական, հոգեբանական և այլ երաշխիքների ապահովումը,
3. գոյություն ունեցող տեղեկատվական ու կրթական կառույցների համակարգում առաջադրված խնդիրների կենսագործման մեխանիզմների ապահովումը:

էկոլոգիական անընդմեջ կրթության պետական քաղաքականության հիմնական սկզբունքներն են՝

[4] «ՀՀ Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» օրենք, 2017, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117615

- քաղաքացու էկոլոգիական գիտելիքների անհրաժեշտ նվազագույնը ստանալու պետական երաշխիքի ապահովումը,
- էկոլոգիական կրթության պարտադիր լինելը կրթական համակարգի բոլոր մակարդակներում, դրա շարունակականությունը և համալիր բնույթը,
- էկոլոգիական կրթության հարցերի ընդգրկումը էկոլոգիական նպատակային և ճյուղային բոլոր պետական ծրագրերում,
- էկոլոգիական կրթության ուղղվածությունը շրջակա բնական միջավայրի պահպանության խնդիրների լուծման ընթացքում,
- պետական քաղաքականության իրականացումն էկոլոգիական կրթության հարցերում:

Ներկա ժամանակաշրջանում մարդկության առջև ծառացած ամենակարևոր և բարդ գլոբալ հիմնախնդիրը բնության և հասարակության դինամիկ զարգացման և հավասարակշռության պահպանման հիմնախնդիրն է: Կամ մարդը կկարողանա պահպանել այդ դինամիկ հավասարակշռությունը, կամ նրա մեղքով կվերանան բնական համալիրները: Անհրաժեշտ է գիտակցել, որ մարդ տեսակի վերապրելը, շրջակա բնության պահպանությունը կարող են վերացական հասկացություններ դառնալ, եթե մենք յուրաքանչյուր բնակչի չհասցնենք այն գաղափարը, որ մարդը բնության մաս է, որ նրա ծագումն ու զարգացումը ընթացել է բնական միջավայրում, որ նրա կողմից ստեղծված արհեստական և մանավանդ,աղտոտված միջավայրում ապրելը վտանգում է մարդու հետագա զարգացումը և ժառանգական լիարժեքությունը:

Այսպիսով հանրապետությունում ազգաբնակչության և առաջին հերթին սովորողների և ուսանողների շրջանում բնության մասին նոր մտածելակերպի ձևավորումը կնպաստի ոչ միայն չափավորելու բնության վրա մարդու ներգործությունը, այլ նաև կանխելու բոլոր տեսակի այն միջամտությունները, որոնք կարող են բացասաբար ազդել շրջակա միջավայրի վրա: Այս մտածելակերպի ձևավորումը հնարավոր է միայն էկոլոգիական կրթության միջոցով: Հետևապես պետությունը, և հատկապես անհատները, պետք է գիտակցեն բնական միջավայրին հասցված վնասների մասին և քայլեև ձեռնարկեն դրանց հնարավոր կրճատման համար:

Էկոլոգիական կրթության դերը դպրոցներում

Էկոլոգիական գիտակցության ձևավորումը դպրոցի կարևոր խնդիրներից մեկն է, որը ձևավորում է բարոյական մշակույթը և անխուսափելիորեն անդրադառնում է անհատի բնապահպանական կրթության վրա: Այն նաև խթան է հանդիսանում էկոլոգիական գիտակցության զարգացման համար: Բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, որի կառուցվածքի հիմքը բնապահպանական գիտակցության զարգացումն է: Սա ենթադրում է, որ բարոյական և բնապահպանական սկզբունքները բնության կառավարման և խթանման գաղափարների օպտիմալացման, ակտիվ ուսումնասիրության արդյունք է: Ճիշտ օգտագործելով տարբեր ուսուցման մեթոդներ՝ դաստիարակում ենք էկոլոգիապես գրագետ և ազնվաբարո մարդ :

Երեխաների էկոլոգիական և բնագիտական դաստիարակությունը մանկավարժության մի ուղղություն է, որը կազմավորվել է վերջին տարիների ընթացքում և փոխարինել է ավանդական, բնության հետ ծանոթացման ծրագրերին: Ի տարբերություն այդ ավանդական մեթոդների, որտեղ երեխային սովորեցնում էին անվանել և տարբերել բնության օբյեկտները՝ որտեղ երեխաները սովորում էին տեսնել բնության որոշ առանձնահատկություններ ՝ արտաքին տեսքը, կենդանիների վարքագիծը, բույսերի աճի պայմանները, դրանց խնամքը և այլն, նոր մեթոդները առաջացան առաջին հերթին մարդու և բնության փոխազդեցության և էկոլոգիական խնդիրների բարձրացման շնորհիվ:

Երկիր մոլորակի վրա կյանքի պահպանման խնդիրը ուղակիորեն կապված է մարդու և բնության փոխհարաբերություններից: Այսպիսով մարդկությունը պետք է հոգ տանի բնական միջավայրի պահպանության մասին ինչը թույլ կտա գոյատևել մարդկությանը: Այդպիսի անցումը հնարավոր է մարդու և բնության փոխհարաբերությունների ձևավորման նոր տեսակի դեպքում: Նախադպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական դաստիարակությունը ունի կարևոր դեր, քանի որ այդ տարիքում ներդրվում են անձի էկոլոգիական մշակույթի

հիմքերը: Էկոլոգիական դաստիարակության արդյունքը դա անձի էկոլոգիական մշակույթի և բնության հետ գրագետ փոխհարաբերությունների համադրություն է: Դա բնության մասին գիտելիքն է, բնության պահպանության ռեալ հմտություններն են, ինչպես առօրյայում, այնպես էլ այլ գործունեության ժամանակ: Էկոլոգիական և բնագիտական դաստիարակության հիմնական խնդիրներն են՝

1. Երեխայի մոտ էկոլոգիական գիտակցության ձևավորումը:
2. Գործնական հմտությունների զարգացում բնության տարատեսակ գործունեության մեջ (այդ գործունեությունը պետք է կրի բնապահպանական բնույթ): Այդ գործունեության ընթացքում երեխաները սովորում են ստեղծել կենդանական և բուսական աշխարհի համար համապատասխան բարենպաստ պայմաններ: Կարևոր է համարվում նաև, որ երեխան սովորի կանխատեսել վնասակար գործունեության հետևանքները, ինչպես ճիշտ վարվել բնության մեջ, պահպանել առանձին կենդանի օրգանիզմների և համակարգերի գոյությունը:
3. Բնության հանդեպ բարիադրացիական վերաբերմունքի դաստիարակություն: Էկոլոգիական գիտելիքների պաշարը թույլ է տալիս երեխաներին ձևավորել համապատասխան վարվելակերպ: Այդ գիտելիքներում կարևոր դեր է խաղում բնության օրենքների մասին հասանելի ձևով տրամադրված գիտելիքները: Մանկավարժը պետք է կարողանա արթնացնել երեխաների մոտ կարեկցանքի, սիրո, հոգատարության, ինչպես նաև ուրախության և հիացմունքի զգացողություններ բնության հետ առնչվելիս: Ոչ պակաս կարևոր է նաև սովորեցնել երեխային գնահատել իր սեփական, իր հասակակիցների, մեծերի արարքների վերաբերյալ գնահատման ունակությունը:

Էկոլոգիական մշակույթի կարևոր մաս է կազմում երեխաների կողմից կենդանի և անկենդան աշխարհի միասնության և փոխկապվածության գաղափարի ընկալումը: Անկենդան բնությունը ներկայանում է որպես կենդանի օրգանիզմների պահանջների բավարարման աղբյուր: Օրինակ՝ կենդանի և անկենդան աշխարհի կապը արտահայտվում է նաև տարբեր օրգանիզմների հարմարեցման մեխանիզմի միջոցով

(ձկները ապրում են ջրի տակ: Նրանց բնակության միջավայրը ջուրն է, ինչը նաև պայմանավորված է ձկների կառուցվածքով և կյանքի պայմաններով):

Ամփոփելով կարող ենք նշել, որ Հայաստանում քայլեր են ձեռնարկվում էկոլոգիական կրթության ներդրման համար, դրանց արդյունքները արդեն երևում են շրջանում շրջակա միջավայրի աղտոտվածության քիչ թե շատ նվազմամբ: Էկոլոգիական կրթության բացերը երևում են հատկապես միջինից բարձր տարիքային խմբերում, իսկ ներկա սերունդը արդեն դաստիարակվում է էկոկրթությամբ:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ամփոփելով կատարված ուսումնասիրություններն ու վերլուծությունները՝ հանգել ենք որոշ եզրակացությունների, որոնք կներկայացնենք ստորև.

1. Մարդկային գործունեության գլոբալ հետևանքները լի են էկոլոգիական ճգնաժամերով և աղետներով: Ամբողջությամբ վերցրած՝ մարդը ներկայումս իր կարիքների համար օգտագործում է էկոհամակարգերի կենսազանգվածի 10%-ը և դրան զուգահեռ ոչնչացնում է ևս 30%-ը, որը հանգեցնում է էկոլոգիական ճգնաժամերի:
2. էկոլոգիական կրթությունը անընդմեջ գործընթաց է՝ նպատակաուղղված անձի էկոլոգիական գիտելիքների ուսուցմանը, էկոլոգիական դաստիարակությանը, էկոլոգիական մշակույթի արմատավորմանը, բնապահպանության, բնօգտագործման և էկոլոգիական անվտանգության բնագավառում անձի ճիշտ և խելամիտ կողմնորոշմանը, ունակությունների դրսևորմանը և վարքագծի ձևավորմանը:
3. ՀՀ էկոլոգիական կրթության և դաստիարակության համակարգի օրենսդրահիրավական դաշտը կարգավորում է ազգաբնակչության էկոլոգիական անընդմեջ կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, իրավական, կազմակերպական և ֆինանսատնտեսական հիմքերը:
4. Հայաստանում քայլեր են ձեռնարկվում էկոլոգիական կրթության ներդրման համար, դրանց արդյունքները արդեն երևում են շրջանում շրջակա միջավայրի աղտոտվածության քիչ թե շատ նվազմամբ: Էկոլոգիական կրթության բացերը երևում են հատկապես միջինից բարձր տարիքային խմբերում, իսկ ներկա սերունդը արդեն դաստիարակվում է էկոկրթությամբ:

Թեև յուրաքանչյուր երկիր էկոլոգիական կրթության հիմնախնդրում կարող է ընտրել տարբեր նպատակներ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ արդյունավետ կլինի սահմանել հետևյալ նպատակները.

- հանրակրթական դպրոցի ԷԿ համալիր ծրագիր, որը հստակ կնշի ԷԿ առանձին բաժինների տեղը հանրակրթության տարբեր աստիճաններում (տարրական, հիմնական, ավագ դպրոցներ) և առարկայական ծրագրերում՝ հեշտացնելով դասավանդումը և ներառարկայական ու միջառարկայական կապերի ապահովումը,
- կրթության բոլոր մակարդակների համար ԷԿ չափորոշիչներ (բովանդակության, սովորողների ուսումնառության ակնկալվող արդյունքների գնահատման չափանիշների սահմանում ցուցիչների ստեղծում),
- արտադասարանական, արտադպրոցական գործնական աշխատանքների իրականացման ուսումնական կենտրոններ, համալիրներ, ամառային դպրոց-ճամբարներ,
- Կայուն զարգացման նպատակներին, սկզբունքներին և չափորոշիչներին համապատասխանող էկոլոգիական կրթության միասնական և ամբողջական մեթոդաբանություն,
- գիտագործնական մեթոդների միջոցով տեղեկատվություն էկոլոգիայի վերաբերյալ միջազգային կոնվենցիաների, դրանցից բխող պարտավորությունների և երկրում իրականացվող քաղաքականության ու ծրագրերի մասին,
- հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն,
- երիտասարդների ներգրավում էկոլոգիական կրթության ծրագրերի իրականացման մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. «ՀՀ էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» օրենք
2. «ՀՀ Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» օրենք
3. «ՄԱԿ-Ի՝ 2001 թվականի մայիսի 23-ին ստորագրված Ստոկհոլմի կոնվենցիայից բխող ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման մասին» Կառավարության N 1483-Ն որոշում
4. «ՀՀ Շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների օգտագործման կառավարման» ռազմավարություն
5. Հայաստանի Հանրապետության էկոլոգիական իրավունք: Նորմատիվ իրավական ակտերի ժողովածու. Երկրորդ լրացված հրատարակություն. - Երևան, 2004
6. Գրիգորյան Կ.Վ., Եսայան Ա.Հ., Ժամհարյան Հ.Գ., Խոյեցյան Ա.Վ., Մովսեսյան Հ.Ս., Փիրումյան Գ.Պ. , «Էկոլոգիայի և բնության պահպանության հիմունքներ», Երևան 2010
7. https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1006
8. http://www.irtek.am/views/act.aspx?aid=94748
9. https://www.unep.org/about-un-environment/evaluation-office/our-evaluation-approach/theory-change